

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

3507 ՏԱՐԻ

1886 ՄԱՅԻՍ 31

ԹԻԻ 3824

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 31 ՄԱՅԻՍ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Ի Մուշ օրուան բուռն խօսակցութեան առարկայ դարձած է Մշոյ Ս. Կարապետի Տիգրանակերտի Առաջնորդութեան հետ միացնելու տարօրինակ խնդիրն, զոր ամենայն իրաւամբ «անիմաստ ծայրայեղութիւն» անուանած են: Խնդիրն է տակաւին, թէ որոշուած լինցած է այս գործ, չ'ենք զիտեր, սակայն թէ՛ այսպէս թէ՛ այնպէս այս բանը Ս. Կարապետի վանքին կ'ործանումն ըսել է պարզապէս, և ամէն մարդ որ կը լսէ զայս, կը փորձուի կարծել թէ նիւթապէս եւ բարոյապէս այս վանքն հարուածելու քաղաքականութիւն մը կայ:

Կը վարանինք սակայն հաւատալու թէ կեդրոնական Վարչութիւնն հաւանած լինի մի այդպիսի անօրինակ և տարօրինակ խորհրդի, որ իսպառ փաստակար է Մշոյ վանքին ամէն տեսակէտով:

Մշոյ ժողովրդեան մէջ այս շտուկ յառաջ բերած է մի դառն սրտայուզութիւն եւ ի՞նչ կ'ըսէ ժողովուրդը. «Եթէ վանքն ու վիճակը ծախուած են Արիստակէս Սրբազանի անձին, ժողովուրդը ինչո՞ւ պիտի դատապարտուի զրկուիլ իւր վանքէն եւ կապուած տեսնել զայն յանձին Առաջնորդին Տիգրանակերտի. եթէ նա Տիգրանակերտի Առաջնորդ է, ի՞նչ բան ունի Մշոյ վանքին մէջ. եթէ վանքերը Առաջնորդութեանց հետ միացնել օգտակար է, ինչո՞ւ

Ս. Կարապետ չը միացուի իր վիճակին հետ, որու 10-15 տարի է ի վեր անյազ տենչանօք կ'սպասէ թէ՛ վանքին Միաբանութիւնն եւ թէ՛ ողջոյն վիճակին ժողովուրդը»: Արդարեւ ցաւալի է տեսնել, միշտ ժողովրդեան խնդրանաց եւ փափագանաց հակառակ տնօրէնութիւնը կը լինին Ս. Կարապետի վանքի մասին: Ժողովուրդն ո՞ր վանահայրն որ խնդրեց և սիրեց, զայն զլացան. Մշոյ հետ վանքի միացման համար միշտ ամենաջերմ փափագ արտայայտուեցաւ, սակայն ապարդիւն մնաց, և երթալով թեմականք կտրեցին իրենց տուրքերը: Վանքը խռովութեանց վայր մը դառնալով զգուանք բերաւ նոյն իսկ Ռուսաստանի արդիւնաշատ ուխտաւորաց, որոց թիւը տարուէ տարի այն աստիճան նուազեցաւ, որ հիմա վանքը գրեթէ զրկուած է արտաքին ամէն եկամտէ եւ հազար ոսկոյ պարտուց տակ կը հեծէ: Վանքին յոյսը մինակ մնացած է թեմական ժողովուրդը, որ սակայն իւր բոլոր բարի եւ օգտակար խնդրոց անկատար մնալէն եւ ի դերեւ ելնելէն յուսահատած, չորս հինգ տարի է որ աստիճանաբար կը կտրէ իւր տուրքը: Խնուս գրեթէ ձեռքէ ելած է, Պուլանըքցիք ալ հերու բուրովին պիտի կտրէին իրենց յարաբերութիւնն, եթէ Ամեն. Խրիմեան Սրբազանի յորդորները չը կակղացնէին Պուլանըքցւոց սրտերը: Ի դաշտ եւ ի ջուր նմանապէս պակասած են նուէրք և տուրք, և եթէ իրաց վիճակն չարունակէ, մօտ է այն օրն յորում բոլորովին կտրի այդ մեծանուն եւ երբեմն մեծահարուստ վանքի ուտելու հացն անդամ:

Ինչո՞վ եւ դարձեալ ինչո՞վ պիտի պահուի այս վանքը. հողային կալուած մ'ունէր այս վանքը բաւական բերրի եւ ար-

դիւնաւոր, այն ալ վանքին 4-5 տարուան անխափանական վիճակին երեսէն յափշտակուած է Գրդերէն. սեպհականութիւնն, վանքն եւ արդիւնքն հանգիստ անոնք կը վայելէն: Իրաց ոչ նուազ ցաւալի վիճակի մէջ, Մշոյ ժողովրդեան սէրն ու կարեկցութիւնը դէպ ի յինքն գրաւելու եղական միջոցն կարելի էր լինիլ դարոցը մինակ, բայց դժբաղդաբար այս ալ չեղածի պէս է. աշակերտը կրթական վատթար դրութենէն տաղտուկ զգալով տարուէ տարի վախուստ կուտան այլ եւ այլ տեղեր իրենց ուսմանց ծարաւը յագեցնելու, որոց մէկ մասը ի Պարսկաստան հասաւ:

Բայց Դերձակեան Սրբազան կ'ընդունի Տիգրանակերտի Առաջնորդութիւնն, պայմանաւ որ Ս. Կարապետի վանահայրութիւնն մնայ իւր վրայ, եւ ի՞նչ հոգ թէ 6-7 օրուան ճանապարհաւ հեռի, բարոյական ազդեցութիւն մ'անգամ չը պիտի ունենայ այս վանքի վրայ, ի՞նչ հոգ թէ վանքին վարդապետներն փոխանակ իջնելով իրենց վիճակին մէջ՝ քարոզելու եւ մխիթարելու ժողովուրդը, փակուած մնան վանքին մէջ, չը տեսնեն ժողովրդեան երեսն, բաժանման վիճակէն վանքն ու վիճակ ցրտանան իրարմէ, եւ ի՞նչ հոգ վերջապէս թէ այս վիճակ յառաջ պիտի բերէ վանքին կործանումը. Սրիստակէս Սրբազանն այս աւելն գիտնալով եւ բանի տեղ չը դնելով կ'առաջարկէ իւր տարօրինակ պայմանը, Պատրիարքարանը պէ՞տք է ընդունի, կամ ընդունած է արդեօք, ահա հոն է խընդիրը:

Երուսաղէմի վանքն աչքի առաջ է, ազգը կը ցաւի նորա այդ ձախող վիճակին վրայ, դարման կը խորհի, ճար կ'որոնէ ազատելու, բայց դեռ բան մը չ'ըրաւ այդ ահագին բեռը բառնալու այդ նուիրական հաստատութեան վրայէն. ո՞չ ապաքէն Ս. Կարապետի վանքը Հայաստանի ամենամեծ մի մենաստանն է, քանի որ ազգին օգտակար ըլլալու հանգամանք ունի, և վրան մտածել անգամ չ'ենք ուղեր, մինչեւ որ այն ալ բաղդակից լինի Ս. Երուսաղէմի վանքին, եթէ արգէն չ'է եղած. այնուհետեւ մտածելն ի՞նչ օգուտ:

Կար ժամանակ մը, յորում ժողովուրդը « ողորմութիւն միշտ բարիք է, կ'ուզես ջուրը

ձգէ» ըսելով կուտար առատօրէն իւր տուրքը: Բայց անցած են այն օրերն, ուր ժողովուրդն ամէն ինչ բարեպաշտական եւ կրօնասիրական զգացմամբ կ'ընէր: « Ես Ս. Կարապետի քարի կուտամ, ի՞նչ կ'ուզեն, թող ընեն»: Այսօր այնպէս չ'է, արդիւնք կը պահանջեն: « Երբ որ մեր տուածները անօգուտ տեղ կը վատնուին, երբ որ վանքը կանոնաւոր դպրոց մ'ալ պահել չ'ուզեր, երբ որ մեր ամէն օրինաւոր խնդիրներ չ'են կատարուիր, վանքին կառավարութիւնն յոռի վիճակի մէջ է, ժողովուրդը խօսելու իրաւունք չ'ունի, թէ եւ արդար, այլ միայն տալու եւ համար չը պահանջելու, ինչո՞ւ տանք ուրեմն, ինչո՞ւ մեր հացն ուտեն աւնոնք, որք մեր երեսն անգամ չ'են նայիր եւ մեր մէկ ֆաբրիկ դարման մը չ'են կրնար ընել», եւ եւ: Այս տրտունջներ օր աւուր, վայրկեան առ վայրկեան կը զօրանան ի միաս վանքին:

Ս. Կարապետի վանքը վիճակէն անջատ պահելու գաղափարին անտեղի եւ զիւսաւար լինիլը փորձն սուպացուցած է. վանք և վիճակ միանգամայն զգացին բաժանման դառնութիւնն եւ հետեւանաց ծանրութիւնն, եւ ասոր համար է որ ժողովուրդը, մինչ կ'սպասէր միացած տեսնել Մուշն եւ վանքը, յապուշ կը կրթի լսելով թէ Ս. Կարապետի վանահայրութիւնն միացած է Տիգրանակերտի Առաջնորդութեան հետ, մանաւանդ որ Սրիստակէս Սրբազանի Տիգրանակերտի Առաջնորդ ընտրուելէ յառաջ կեդրոնական Խառն ժողովն բանաւոր եւ օգտակար որոշում մ'ըրած էր, Ս. Կարապետ Մշոյ հետ միացնել, եւ ժողովուրդն ի՞նչպէս չը դարմանայ և չափի ի տեսնելով որ այն որոշման թղթի մեկանը չը չորցած, Ս. Կարապետի վանքը Տիգրանակերտի հետ միացած կը լսէ:

Չը գիտենք թէ ի՞նչ կերպով Մշոյ վանքը յանձնուած է Տիգրանակերտի առաջնորդին, կամ թէ վերջնական է այս կարգադրութիւն, միայն աներկմիտ եմք ըսելու, որ եթէ ստոյգ է, այդ օրինակ կարգադրութիւն մը վանքին անկումն է:

* * *

Գ Բ Ա Ն

ՎԵՐՋ ՍԱՏԱՆԻՆ

Նախընթաց երկուշաբթի, Վիքթոր Հիւկոյի մահուան տարեդարձին առթիւ, Բարիզի մէջ հրատարակուեցաւ Մեծ Բանաստեղծին անտիպ դործոց երկրորդ հատորը։ Առաջինը, Թաքսան յԱզատութեան, յամենուտ արժանի դատուեցաւ հեղինակին հանճարոյն։ Այս երկրորդն, Վեյլ Սաթանին, ստուգապէս պիտի անցնի բանաստեղծին ամենէն բարձր յղացմանց կարգը։ Գիծաղա դարար, գիրքը, թէեւ բաւական ստուար, անկատար է եւ ամբողջ մասեր պակաս են։ մնացած կտորներէն դատելով, կարելի է հասկնալ թէ այդ գիրք ի՞նչ տեղ պիտի բռնէր Վիքթոր Հիւկոյի բանաստեղծութեանց մէջ։

Վեյլ Սաթանին գրուած է 1854ին եւ 1860ին, այսինքն այն ժամանակ ուր բանաստեղծը կը փայլէր իւր հանճարին բովանդակ լրութեան մէջ։ Ձեռագրին առաջին երեսին տակը գրուած է 1854 ապրիլ 12 եւ վերջին երեսին տակ 1860 յունվար 17 եւ 18։ Ամեն քերթուածի ներքեւ, Վիքթոր Հիւկո սովորութիւն ունէր յիշատակել տողերուն թիւն։ այս կերպիւ, Սաթան վերնագրով գլխոյն տակ կը կարդացուի։ «Աւարտեալ 1864 ապրիլ 8ին — 822 տող, ձէրդի։»

Այս բանաստեղծութենէն դուրս եկող գաղափարը, ներման, փրկութեան, ազատութեան գաղափարն է։ Վիքթոր Հիւկո, որ գերազանցապէս քնարերգական հանճար մ'ունեցաւ, իւր բովանդակ մեծամիառութեամբն ի յայտ կուգայ այդ քերթուածոց մէջ։ Նախ եւ առաջ, բանաստեղծը մեզ կը ներկայացնէ Սատանին անկումն։ Գրքին գլխաւոր հատուածոց մէջ պէտք է յիշել այս կտորն որ կը նկարագրէ անջրպետին մէջ նետուած հրեշտակին անկումը եւ երկնային անդնդոց մէջ դահաւիթիւր։ Աստեղք կ'անհետին իւր աչաց առաջ, արեգակն իսկ կը նուաղի, կը շիջանի իրեն համար։ Մեղք որ դժուար է ափ յափոյ յանգաւոր թարգմանել այդ վեհաշուք տողերը։ միայն

թէ գաղափար մը տալու համար, արձակ կը թարգմանենք քանի մը մասերը։

Արեգակը նուաղկոտ կը շիջանէր անդունդին մէջ,
Աստղն, ի խորս մթնշաղին, ոգեւորէր օդէ զուրկ,
Գամ քան զգամ կը պաղէր, տիրատեսիլ եւ կիսաւեր,
Գիշերին մէջ կը տեսնուէր իւր բոլորակն մահահամբ

բոլոր։

Եւ այդ խաւար լուութեան մէջ կը տեսնուէր նուա-

ղին

իւր բոցեղէն ծերպերուն, ընդ սեւաթոյր ստուե-

րովք։

Իւր փաղաքները տակաւին ցոյց կուտային քիչ մը

հուր,

իբր թէ գանկին ծակերէն հոգին անդրէն տեսնուէր։

Եւ քերթուածն այսպէս կը շարունակի, նկարագրելով արեգական տակաւ շիջանումն։ Եւ հրեշտակն, սլարտասած ու վաւատակաբեկ, կը գահավիթի անդունդէն վար։ «Իւր շուրջն, ժամանակն եւ միջոցն եւ թիւն եւ ձեւն եւ աղմուկը կը հատնէին, ստեղծելով անէութեան զարհուրելի եւ աղջամղջին միութիւնը։ Ոչինչ ուրուականն անդունդէն դուրս կը հանէր գլուխը։»

Աստի ահա ծագումն կ'անու բանաստեղծութիւնն ու երկնից մէջ սկսած, երկրիս վրայ կ'իջնէ։ Սատանին անկումէն յետոյ, մոլութիւնը կը տարածուի մարդոց մէջ, որք ծուներ կը դնեն կուռքի մը առջեւ։ Վուգայ ժամն որ Աստուած, ներքէ ձանձրացած, կը հրամայէ Ջրհեղեղն։ Ընդ ներք կ'անհետանան կոհակաց ներքեւ։ Ջրը հեղեղի նկարագրական մասին մէջ կը դըտնենք սա հիանալի տողերը։

Ամեն ինչ անհետացած էր, ալիք ալեաց վրայ կ'ելնէին։

Աստուած կարդար գրքի մը մէջ եւ ամեն ինչ քանդուէր։

Երկնից մէջ մերթ ընդ մերթ կը լսուէր շշուկն Ջրը կը հանեն դառնալով տոմարի մը էջերը։

Անդունդը գիտէր միայն, իւր մահացող մշուշին մէջ, թէ ինչ եղած էին մարդիկ, եւ ձայներն եւ լեռներն... Եւ լուութիւնը լցոյց մահահամբոյր տարածութիւնն

Եւ երկիրս, ջրեղէն գունտ երկնից մէջ կախուած, Ազաղակէ, շարժումէ, ձայնէ, լոյսէ, աղմուկէ զուրկ, Գիշերին մէջ անհուն աղբուք մ'էր միայն։

Կեանքը կը վերածնի ի վերջոյ, այլ Սատան կը հսկէ։ Ի մի ոստիւն, հեղինակը կ'անցնի բազմաթիւ դարեր։ Միշտ եւ ամենուրեք ապականութեան նոյն տեսարանը ներկայանայ իւր աչաց։ Մօր պիտի գայ այն որ պիտի իրագործէ եղբայրակցու-

թեան, խաղաղութեան եւ սիրոյ գաղափարը: Սպասենք տակաւին, աշխարհ կը տառապի, այլ մերձ է փրկութեան օրն: Այն գլուխ, յորում վիքթոր Հիւկօ կը նշեկարագրէ գիսուս Գրիստոս, ինքնին միայն մեծ բանաստեղծութիւն մ'է ուր վարպետին հանձարն ի յայտ կուգայ իւր բովանդակ հզօրութեամբ: Եկեղեցւոյն Հայրերը չ'են գտած աւելի պերճախօս եւ աւելի սրտաբուզի շնորհ:

Աւասիկ ինչպէս կը ծանուցանէ Գրիստոսի գալուստը.

Արդ, յայնժամ քաղաքաց մէջ կը խօսուէր
Զարմանալի մէկու մը, ճաճանչափայլ մարդու մը
վրայ,

Որում հրեշտակք հետեւէին միլիոնաւոր աշերով:
Այս մարդն, զոր կը պատէր յարաճուն շշուկն,
կը թուէր աստուած մը որ կ'իջնէ ի յերկիր աստ,
Գողգես նա հովիւ մ'էր որ կը ժողվէր իւր հօտերը:

Աստ կը գտնուին Հրէաստանի նկարագրութիւններ եւ Յիսուսի կենաց տեսարաններուն պատմութիւնն, յորս բանաստեղծն սքանչելի կերպիւ կը զարգարէ ժամանակակից հնախօսութեան բոլոր գիւտերն իւր հրաշալի վրձինին ամենէն վայլուն երանգներով: Զարերն այս անգամ ալ կը յաղթանակեն. Յիսուս կը խաչուի: Բանաստեղծին բարձր երեւակայութիւնն ազատ թռիչ կ'առնու եւ նորանոր դրուագներ կ'ստեղծէ: Բարրաբաս աւազակն, որոյ արձակումը խնդրած է տխմար ամբոյսն, եկած է այցելել խաչելութեան վայրն. . . « Յանկարծ, այդ ժեռուտ բլրակին վրայ, չը գիտցուիր ի'նչ ոգի թափանցեց այդ մարդուն հոգւոյն աղջամղից մէջ եւ սոսկալի ըրաւ զայն: » Եւ ձեռքն յնրուսադէմ կարկառելով կը դռչէ. « Ո՛հ, եթէ ինձ գրիմած լինէին, եթէ վիզս պատին կապուած ժամանակ Պիղատոս գար գտնել զիս յարդին վրայ, եւ եթէ ըսէր ինձ. « Օ՛ն, ընտրու » « թիւնը քեզ կը թողունք. այսօր տօն է, « պէտք է մէկը խաչն հանել. կա՛մ Գալի » « լէացի Գրիստոս եւ կա՛մ զքեզ, վայրի » « գաղան. պատասխան տուր, երկուքէն » « ո՛րը կ'ուզես որ աղատեն », իմ ձեռներս պիտի կարկատէի եւ ըսէի. « Գամեցէ՛ք: » . . . « Այսպէս մեռաւ Յիսուս, եւ յայնմ ետէ ժողովուրդը, խելացնոր, զգացին թէ հանձանօթն իսկ երեւցած էր իրենց յանձին

այդ գերագոյն մարդուն եւ թէ նորա Աւետարանը նման էր երկնայնոյն: »

Սատան կուլայ իւր կորուսած երջանկութիւնն, իւր շիջած երազներն. սէրը կ'ատէ զայն: Այլ, այն պահուն որ իւր յուսահատութիւնը կը թափէ բարկաճայթ բանիւք, Աստուած կը խօսի անհունութեան մէջէն եւ կը ներէ նա:

Ո՛չ, բնաւ չ'եմ ատեր զքեզ:

Այս է, արագ հայեացքով մը, այս քերթուածն, հսկայ արտադրութիւն խորհողի եւ բանաստեղծի մը: Վերջ Սափա՛ն ստուգապէս պիտի լինէր քերթուածոց երկար շարքի մը պակասումը: Ի՞նչպէս չ'ողբալ որ մահն այնքան կանուխ խորտակեց գրիչն որ գրեց Դարո՛ց Վաչէն եւ որ թերեւս պիտի գրէր մարդկութեա՛ն պատմութիւնը:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

ՊԱՐՆԸՄԻ ՄԵՄ ՅՈՅՅԵՐՆ

Նիւ-Եորք, 15 Ապրիլ

Աշխարհիս գրեթէ ամէն կողմերն տարածուած է այժմ Պարնըմի եւ իւր եղական ցոյցերուն համբաւն: Ամերիկայի մէջ հրատարակուած ամէն թերթեր մանրամասնաբար գրեցին ու կը գրեն այս տարօրինակ երեւոյթներու վրայ, եւ բնականաբար եւրոպական թերթեր վար չեն մնացած այս մասին ամերիկեան լրագիրներէն: Շատ երկարած կը լինիմ նամակս եթէ զբաղիմ Պարնըմն ու իւր ընկերութիւնը ծանօթացնել Մաֆի ընթերցողաց, այլ միայն պիտի բաւականանամ՝ կարելի եղածին չափ՝ պատմել « Պարնըմի ցոյցերու » մի քանիներ որք ամենէն հետաքրքրականները կրնան սեպուիլ. միայն աւելորդ չ'եմ համարիր անցողակի յիշել թէ Պարնըմի կենսագրութիւնն ամբողջութեամբ է ստուար հատորի մը մէջ, ուր փափաք ունեցողներն կրնան իրենց փընտաւածը գտնել:

Պարնըմ մէկ ու կէս ամիսէ ի վեր Նիւ-Եորք կը գտնուի, Մատիսըն Արուէյր Կայ-

տընի մէջ տեղաւորուած , որ միակ չէնքն է այսպիսի ցոյցերու յարմար : Այս չէնք Պըրօտուէյի վրայ շինուած է , որուն համար հարկ չէ ըսել թէ մեծ ընդարձակութիւն մ'ունի , եւ Պարնըմ ամէն անգամ որ Նիւ-Եորք այցելած է՝ այս չէնքն է ընտրած իւր ցոյցերուն վայր :

Ի ստորեւ պատմելիքներս լրագիրներէ քաղուած չ'են , այլ աչքերուս առջեւ տեղի ունեցած ցոյցեր են միայն , որոց պատեհութիւն ունեցած եմ այս տարի քանիցս ականատես լինիլ : Բայց աւա՛ղ , Ճումպոյ փղին բացակայութիւնը մեծ բաց մը կը թողուր : Պարնըմ իւր ահագին ծանուցումներուն մէջ , որք պատկերներով ու այլ եւ այլ ցոյցերու նկարներով լեցուած են առհասարակ , չէ մոռցած Դիքսոն-հոթել , որոյ շնորհիւ մեծ գումարներ գլտորած էին իւր մեծ քսակին մէջ : Ոչքայնալ Ճումպոյին յարողած է այժմ մի ուրիշ փիղ Ալֆ անունով , որ թէեւ իւր կրթութեամբ կրնայ հաւասարիլ հսկայ հաճախեցեալս , սակայն Ճումպոյի մեծութիւնն ու անճոռնի կնճիթը մեծ բաց մը թողուցած են « Պարնըմի ցոյցերուն » մէջ :

Երէկ երեկոյ ժամ եօթնէն առաջ Մաքսիմ Ստեյն-հարթի դրան առջեւ կեցած կարգիս կ'սպասէի որպէս զի ներս մտնեմ : Բազմութիւնն այնչափ մեծ էր , որ փողոցն անանցանելի դարձած էր : Բաւական ստեն սպասելէ յետոյ հազիւ կարողացայ ներս մտնել . վերջապէս ժամութիւն ատենները տեղաւորուած էի աթոռիս վրայ , աջ կողմն մի բարեկամ եւ առջեւս երկու իռլանտացի գործաւորներ ունենալով :

Շէնքը լուսաւորուած էր ելեկարական ճրագներով , որոց մէջտեղերը կը ծածանէին հազարաւոր դրօշակներ այլ եւ այլ ազգաց պատկանեալ : Օսմանեան դրօշն ալ անտեսուած չ'էր , և այս միութարութիւն մ'էր մեզ համար , Բազմութիւնը խիստ մեծ էր . ներ-որոց թիւն կը հաշուէր առ նուազն 8-9,000 անձ , որոց նստարաններն մի բոլորակ կը կազմէին հանդիսավայրերու շուրջն աստիճանաբար : Հանդիսավայրներն չորս էին , որոց շուրջը ձիարաւի համար առանձին տեղ կար պատրաստուած : Սոյն հանդիսավայրներու վրայ առատաւորէն կախուած շատ մը Դիքսոններ կ'երեւէին , նմանապէս աչքի

կը զարնէին տակառաց բազմութիւնն և այլ տախտակեայ առարկաներ :

Նուագարաններն սկսած էին հնչել , ժողովրդեան աչքը յառած էր այն մեծ դըւրան , ուսկից դուրս պիտի գային կենդանիք , ճարտար լարախողացք եւ վերջապէս բացուեցաւ այդ դուռ . երեւցան մեծագին նժոյգներ գեղեցիկ սեռի գեղեցիկ հեծեալներով , որոց մետաքսեայ գոյնգոյն հանդերձներու մէջ գտնուած փալիւռն զարդերն անդրադարձնելով ելեկարական լոյսերն աչք կը շլացնէին : Սոյն հեծեալներուն կը հետեւէր երիտասարդաց խումբը տեղաւորեալ իրենց ձիերու վրայ նմանապէս գեղեցիկ զգեստներով , փալիւռն զարդարանքներով ու ստղալից դրօշակներով : Այս երկու խումբերուն հետեւէն կը քալէին անճոռնի փիղերն գեղեցիկ ծածկոցներով և զարդերով : Արդարեւ փիղի զգուսնը պատճառով մորթն անաբաժան է որ և է զարդու , սակայն Պարնըմի փիղերն արժանացեր էին ադոնց : Փիղերու մի քանիներու վրայ դրուած կային առանձին գահաւորակներ , որոց մէջ բազմող անձերն կը կրէին արեւելեան հագուստներ . մին չինաստանցի էր , միւսը հնդիկ , ուրիշ մը մի այլ երկրացի , բոլորն ալ իրենց տեղաց յատուկ զարդերով պնծեալ : Եկան նմանապէս տասնէ աւելի ուղտեր արաբացի հեծեալներով . աչքի կը զարնէին արեւելեան հին ազգաց ոմանց թագաւորներու գործածելիք կառքերն , իրենց յատուկ զարդարանքներով : Վերջապէս այսպիսի շատ մը խումբեր դուրս գալով մի մեծ թափոր կազմեցին . նուագածու խմբի հետեւէն քալելով երկիցս շըրջելէ վերջ հանդիսավայրերու բոլորաթիւն , ոմանք ադոնցմէ հանդիսավայրն եկան եւ ոմանք անտես եղան աչքերէ :

Սոքա անցան , եւ ահա երեք չինաստանցիներ եկան հանդիսավայրն ու նուագել սկսեցին իրենց երկրին յատուկ մի նուագարան : Իրենց տղեղ գէմքն , հագուստներն ու նուագարաններն յարմարած էին միմեանց : Մինչ սոյն չինաստանցացի նուագն ուշադրութիւն կը դրաւէր , անդին քիչ մը վեր յիշուած մեծ դռնէն հեալհետէ դուրս կուգային հրէշներ : Առաջինը չինաստանցի մ'էր երկարահասակ , որ իւր տեսակին մէջ , կամ լաւ եւս է ըսել բանական փիղերու

Ճուռագոն էր . միջհասակ անձ մը այն ատեն միայն կրնար հասնիլ այս հսկայի գագաթին, երբ ուրիշի մը ուսին վրայ կարողանար կանգնիլ : Սոյն հրէշին կը հետեւէին ուրիշ երկարահասակներ , որոց մէն մի բայլը կարծեմ երկու կանգուն տեղ կրնայ առնել :

Երկարահասակ հսկաներուն կը հետեւէին տասի չափ գէր անձեր . առաջին երեքը կիներ էին , որոց մինն էր ամենէ հետաքրքրական . կարծես իւր ազդերուն վրայ կտոր կտոր միս կար փակուած . ասոնց հետեւէն կուգար տասն եւ հինգ անարեկանի չափ տղայ մը , այնչափ գէր որ հազիւ կրնար բայլերը փոխել :

Այս կարգի հրէշներն անցնելէ վերջ եկան երկու արաբ աղջիկներ իրարու փակած կռնակ կռնակի ու պարել սկսեցին հանդիսավայրին մէջ . Հրէշներու իրարու փակած լինին յայտնի չէր արտաքուստ , վասն զի զգեստներն կը ծածկէին ամէն բան , սակայն շարժումներն այնքան բնական էին որ տեսնող մը կրնար հաւատալ դոցա փակած լինելուն . եւ այսու հանդերձ հասարակութեան վկայութիւնն կը հաստատէր զայս , ինչպէս նաեւ ո՛չ ոք կրնար վստահիլ Պարնըմի պէս մէկու մը :

Սոյն ցոյցերը վերջանալէ յետոյ խաղերն սկսեցին . առաջին անգամ եկան քսանի չափ ըմբիշներ որոց մէկ մասն աղջիկներ էին : Սքա բոլորն ալ հագած էին ըմբիշներու յատուկ զգեստներ : Մէկ հանդիսավայրին վրայ զառիվայր մը շինեցին գետնէն քանի մը կանգուն բարձր . սոյն զառիվայրը մէկ ոտքի չափ լայնութիւն ունէր եւ բաւական երկայնութիւն . իսկ գետնին վրայ , սոյն զառիվայրի ցած կողմը , բուրդէ շինուած մեծ բարձ մը դրուեցաւ : Ըմբիշը զառիվայրին վրայ վազելով օդին մէջ կը նետուէին եւ երիցս իրենք իրենց վրայ գառնալով ոտքի վրայ կը կենային յիշեալ բարձի վրայ : Քիչ մը ատեն սոյն խաղն շարունակուելէ վերջ , մեծ դուռը բացուեցաւ ու տասն ձիեր դուրս եկան , որոց հինգը մէկ հանդիսավայրը գնացին եւ միւս հինգն երկրորդ հանդիսավայրն . ձիանք կրթեալ գինւորներու պէս կարգաւ շարուեցան իրենց հրամանատարին սպասե ով : Շատ չանցած երկու անձեր խաղան ի ձեռին հանգէս եկան . երկու հանդիսավայրներու մէջ մի և

նոյն խաղն սկսաւ . ձիանք խաղաղանի նշանով մը իրարու ետեւէ վազել սկսան շուրջանակի : Եղաւ վայրկեան մը յորում ձիերն կարելի չէր որոշել . կարծես թէ մեքենաբար դարձող միակտուր շղթայ մ'էր . ձիանք այդչափ արագ վազած ատեն երբ նշան տուող անձն հրաման կ'ընէր , կենդանիք անմիջապէս դառնալով հակառակ կողմը կ'սկսէին վազել :

Կրթեալ անասնոց վարպետութիւնն այս չէր միայն : Երբ հրամանատարն խաղաղանով կը շոյէր կենդանեաց ոտքերն , այս վերջինք ծունգի վրայ գալով մի շրջանակ կը կազմէին գլուխ գլուխի մօտեցուցած . այս դիրքին մէջ անասնոց իրարմէ ունեցած հեռաւորութիւնն այնքան ճիշդ էր որ դիտող մը իրաւունք պիտի ունենար կարծելու թէ դոցա հեռաւորութիւնն կանգունով չափուած էր : Խաղաղանի թեթեւ հարուած մը երկու ոտքի վրայ կը կեցնէր ձիերն իրարու ետեւ . զարմանալի էր յոյժ տեսնել ձիանց քալելն այս դիրքի մէջ . վերջապէս կրթիչ խաղաղանն այնպիսի դիրքեր կուտար ձիերուն որուն կրթեալ պիտուարք գուցէ դժուարաւ կրնան վարժուիլ :

Սոյն ցոյցերուն յաջորդեց « փափուկ կենդանիներու » խաղն , որոց կնճիթին չէր վայելեր կիրթ եղած լինիլ , սակայն վարպետին ձեռքեր մեծ փոփոխութիւններ միացուցեր էին այդ ահագին կենդանեաց բիրտ շարժմանց մէջ : Իւրաքանչիւր հանդիսավայրի մէջ հինգ փիղեր եկան ու ձիանց պէս վազել սկսեցին խաղաղանի հրամանաւ , որոյ մէկ շարժումն միայն բաւական էր այլ եւ այլ ձեւեր տալ սոյն անճուռնի անասնոց : Սոցա խաղերուն մէջ նշանաւորներն էին երկու ոտքի վրայ կենալն , չորս ոտքով փոքրիկ տակառի մը վրայ ելնելով զայն գլտորելն , կնճիթին վրայ մարդ առնելն , դըլուխին զետին դրած ետեւի ոտքերն օդին մէջ բարձրացունելն և և :

Մինչ սոյն երկու հանդիսավայրերու մէջ փիղերու խաղն տեղի կ'ունենար , անդին միւս հանդիսավայրի մը մէջ մի փոքրիկ փիղ խիստ գիրուկ անձի մը հետ գինի կը խմէր ու կը զուարճանար : Այս հադուած փոքրիկ երկու ոտքի վրայ քալելով նստաւ ամթուռի մը մէջ , որոյ առջեւ կար դրուած մի սեղան . փղիկն իւր կնճիթով կը բռնէր եր-

բեմն փոքրիկ զանգակ մը ու ձայնելով զայն հանդիսականաց ուշադրութիւնը կարծես կը հրաւիրէր իւր վրայ : Զարմանալի էր գինի խմելն . կենդանին կը բռնէր իւր կնձիթով գինիի սրուակն որոյ բերանը կը դարձունէր իւր բերնին մէջ : Սոյն փղի ու իւր ընկերոջ մէջ երբ կուի մը բրդեցաւ , ժողովորդեան ուշադրութիւնն հոն կեդրոնացած էր . խնդացուցիչ շատ մը շարժումներէ վերջ փիղն առաւ գիրուկի գլխարկն ու զայն դրաւ իւր աթոռի վրայ , ուր բազմեցաւ հանդարտութեամբ : Գիրուկը կտոր կտոր կը լինէր՝ գլխարկն ազատելու համար այդ անպատիւ տեղէն . սակայն փիղը դըլուխը կը շարժէր , կարծես թէ « նո , նո » , ո՛չ , ո՛չ կ'ըսէր իւր հակառակորդին :

Ուրիշ հանդիսավայրի մը մէջ մէկը չուն մը կը խաղցունէր : Նրկու անձեր չուան մը բռնած կը դարձունէին օդին մէջ ու չունը երկու ոտքով կը խաղար դորա մէջ , ինչպէս որ փոքրիկ մանուկներ կ'ընեն : Շահ խաղցունողն ձեռքը շրջանակ մը կը բռնէր բարձրացնելով զայն օդին մէջ և չունն ոտքերը գետին զարնելով կը բարձրանար ու կ'անցնէր շրջանակին մէջէն հակառակ կողմն յնալով :

Զը գիտեմ որն պատմեմ ընթերցողին . եթէ քիչ մ'ալ մանրամասնութեան մոտեմ , պէտք է առ նուազն Մասիսի մի քանի թիւեր լեցնել : Հանդիսավայրի մը մէջ ալ աղջիկ մը կեցած էր այս միջոցիս սեղանի մը առջեւ , որոյ վրայ դրուած կային պարապ սրուակներ , ծխափայտեր , դանակներ ևն : Սոյն աղջիկ , որ գեղեցկութեան հրաշակերտ մը կրնար լինիլ , առաւ նախ տասնի չափ դանակներ որք կը փալփէին ելեկտրական լոյսին առջեւ , ու զայնս սկսաւ օգին մէջ նետել ու բռնել կոթերէն : Դանակներու մեծ մասն օդին մէջ էին միշտ : Թողլով ուրիշ բազմութիւ խաղեր պատմեմ միայն մին , որ սոյն աղջկան յաջողութեան մի մեծ ապացոյցն կրնայ լինիլ : Սա առաւ գետնէն վեց եօթն պարապ սրուակներ , ու զայնս իրարու վրայ դնելով այնպէս մը ծըռեց որ կէս շրջանակ մը շինուեցաւ ու տակի սրուակն կեցուց ծխափայտի մը վրայ որուն ծայրը յեցուց ուրիշ երկու ծխափայտերու վրայ ու զայն դրաւ ակռային , շրջելով հանդիսավայրին մէջ : Բոլոր հանդիսականք ծա-

փահարութեամբ եւ հուրրաներով դղրդեցին չէնքն :

Ուրիշ շատ մը զարմանալի խաղերէ յետոյ , ձիանք նորէն երեւան ելան . մէն մի հանդիսավայրի մէջ մի գեղեցիկ ձի երեւցաւ գեղեցիկ մի հեծեալով , որոց զգեստներն , գեղեցկութիւնն , շարժումներ , բարեւելու ձեւերն ևն համեմատ էին իրարու : Զիանք դառնալ սկսան հանդիսավայրին մէջ : Հեծեալը ոտքի կեցած էին : Հանդիսավայրին մէջտեղ կեցող անձերն , որք խաղան ի ձեռին հրաման կուտային նժոյգներուն , երթալով կ'արագացունէին ձիերու շարժումն : Հեծեալը կ'սկսէին իրենց յաջողակութիւնն ցոյց տալ . եղաւ վայրկեան մը յորում հեծեալը մէկ ոտքի վրայ կեցած այնչափ կը ծռէին , որ տեսնողը իրաւունք ունէին կարծելու թէ հեծեալը ինչպէս դրից մէջ կը գտնուին : Նրբեմն թողութով պատած շրջանակներ կը բռնուէին հեծեալին առջեւ , եւ այս վերջինք ծակելով զանոնք կը կենային նորէն ձիերուն վրայ , կանաչներու մէջ թռչտող մարտիկներու պէս ոստումներ ընելով շարունակ : Նրբեմն տասն շրջանակներ բռնուեցան իրարու ետեւ ու հեծեալը դոցա մէջէն անցնելով կը կենային նժոյգին վրայ որ միշտ կը վազէր : Մափա հարութիւնը խլացուցիչ էին : Դրուեցան սոյն ձիանց առջեւ փոքրիկ զահաւորակներ իւր մէկ մեթր բարձրութեամբ . կրթեալ անասունք դոցա վրայէն թռչիլ սկսան հաւերու նման , որոց վրայ կեցող հեծեալը անդղորդ կը մնային միշտ : Հեծեալը կը փոխուէին շարունակ : Նորեկներն աւելի վարպետ գոլով , աւելի զարմանաց արժանի խաղեր կը խաղային . ամենէ աւելի ուշադրութիւն դրաւող հեծեալն էր մի գաղղիացի երիտասարդ , որոյ յաջողութիւնն անչափ զարմացուց հանդիսականներն :

Տրապիզի վրայ տեղի ունեցող ամէն խաղերու վրայ հարկ չը կայ երկար գրել , զի ընթերցողը քիչ շատ գիտեն զայդ , միայն թէ Պարնըմի գործոյն մէջ գտնուող լարախաղացը ու տրապիզի վրայ խաղացողներ աշխարհիս ամենէ երեւելի ըմբիշներն կը սեպուին : Քանի մը տրապիզներ կային մի հանդիսավայրին վրայ կախուած իրարմէ չորս հինգ մեթր հեռի , որոց մէջ նստողներ իրարու կը նետէին մի տասն եւ հինգամայ

աղջիկ խնձորի մը պէս խաղալու ժամանակ : Վերջապէս չը պիտի կրնամ ներկայացնել մեր ընթերցողաց այն ամէն խաղերն որք տեղի ունեցան . կատարուած մարմնամարզի փորձերն ա՛յնքան ուշադրաւ էին որ ներկայք ապշած, գուցէ աչքի երեւոյթ մը կը կարծէին զայդս :

Փիղեր, ուղտեր եւ այլ անասունք արշաւներ ընելէ յետոյ վերջացաւ հանդէսն ու ժողովուրդը ցրուիլ սկսաւ : Իսկ մենք Պարնըմի ի տես դրած ամէն տեսակ կենդանիները դիտելու գնացինք, որք զետեղուած էին յատուկ կառքերու մէջ :

Այսչափս պատմելէ վերջ աւելորդ չ'եմ սեպեր ըսել նաեւ թէ Պարնըմ քանի մը շաբաթ վերջ պիտի մեկնի Եւրոպա չը վերադառնալու պայմանաւ, և այս տարի վերջին այցելութիւնն եղած լինելուն պատճառաւ ժողովուրդն ստուար բազմութեամբ կը վազէ տեսնելու այս անձին աշխարհահռչակ ցոյցերն : Մէն մի գիշեր Մարիսըն Սոսէյր կարգէի մէջ առ նուազն կը խոնուին իւր 5-8 հազար անձինք . մուտքն է 50 սէնթ, 1 տուար, 1 1/2 եւ 2 տուար :

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԵՐԶԱՆԻԿ ՄԱՐԴ ՄԸ

(Շար. նախորդ թուէն եւ վերջ)

Ե.

Շատ սիրուն ապաստանարան մ'էր այս տեղս : Պարոն տ'Արմիլ գեղեցիկ պարտէզի մը հովանեաց տակ, եւ հանդարտութիւն եւ զովութիւն ազդող ընդարձակ բակերուն մէջ ձեւելով, կը տեսնէր որ կեանքը գէշ բան մը չ'է :

Ուրախ կ'ըլլոր տեսնելով որ երջանկութիւնը տեսա՞մ մը կատաղութեամբ կը հալածէր զինքն այն օրէն ի վեր՝ որ թողուցեր էր իւր կինը : Այս կերպով ձակատաղիւր փոխարինութիւն մը կ'ընէր իւրեան, բայց

ինք աւելի դժուարութեանց կ'սպասէր . կարծեր էր որ անօթութենէ, դատաւորաց խստութենէն եւ բանտապահաց վայրագութենէն շատ նեղութիւն պիտի կրէ, իսկ ընդ հակառակն ամէն տեղ խնամք եւ համակրութիւն գտած էր :

Մարդիկ կրնային իրեն հետ վարուիլ իրրեւ ընդ մութացիկ . սակայն չ'էին ուզած այդպէս . հալածել զինքն իրրեւ թափառական մարդ, սակայն մէկ կողմ դրած էին իրենց այդ խորհուրդը . պատուհասել զինքն անպատուութեամբ եւ պատժով, սակայն վերջապէս անսկարտ արձակեր էին զինքը :

Նա՛ յորչափ որ լուութիւն պահէր էր և չ'էր ուզած ինքզինք ձանձնել, սակայն դարձեալ իւր հետը վարուած էին ակնածութեամբ որպէս թէ ծանօթ մէկն եղած ըլլար . եւ մտածեր էին իրենք իրենց թէ արդարեւ կարելի չ'է՞ որ մարդս աշխարհի մէջ ունեցած դիրքը փոխէ, եւ թէ տեսակ մը անհրաժեշտութիւն կ'այ. երջանկութեան մէջ ինչպէս ի թշուառութեան :

Հետեւյալէս պարոն տ'Արմիլ մտաւորական ամեներջանիկ տրամադրութեան մը մէջ ներկայացաւ իւր մտաց վիճակը ըննելու պաշտօնն ունեցող բժշկին առջեւ :

— Տեսնենք, պարոն, ըսաւ բժիշկը . բացատրեցէք ինձ թէ ի՞նչ կ'զգաք :

— Ես յիմար եմ, պարոն բժիշկ :

— Յիմար մի, աղաղակեց բժիշկն ապշութեամբ . առաջին անգամն է որ այս ապաստանարանիս մէջ եղող մէկու մը բերնէն կը լսեմ այս խօսքս : Յիմար ըլլա՞նիդ ի՞նչպէս գիտէք :

— Եթէ յիմար եղած չ'ըլլայի, զիս հոս չ'էին խրկեր :

— Բայց կրնայ ըլլա՞յ որ սխալած ըլլան : Վարջութիւնը խրկած է զձեզ հոս . բայց բժշկականութիւնը դեռ իւր վճիռը տրուած չ'է :

— Երբ իմ պատմութիւնս ընելու ըլլամ վարանմունք կը փարատին : Ես ազնուական եւ հարուստ էի, ամէնուն յարգանքը եւ իմ մերձակորաց սէրը կը վայելէի . կին մը ունէի որ օրինակ է ամենայն առաքինութեանց եւ որուն միակ գործն ու զբաղումն է բարեգործութիւն ընել : Ահա այս կատարելութեան տանջանքէն ազատելու

նպատակաւ էր միայն որ կենաց ամէն քաղցրութիւնները մերժեցի: Ասկից աւելի խենդ եւ յիմար կրնա՞յ ըլլալ մարդ:

— Այս ըսածդ պատճառներէ կախում ունի: Արդարեւ սոսկալի գրգռութիւն մը զգալու է մարդ սպրեւով ա՛յնպիսի անձի մը հետ՝ որ իւր մասնաւոր կեանքը չ'ունի, որովհետեւ իւր բոլոր գործերը կ'ենթարկէ ուրիշներուն կարծեաց: Այսպիսի անօգուտ վարմունք մը տեսակ մը պարսաւ է այլոց, եւ ես կը հասկնամ թէ դուք չ'էք կրցած հանդուրժել այս հալածման:

— Այո՛, Բայց գիտէ՞ք արդեօք թէ ի՞նչ պէս ըրի այս հալածումէս ազատելու համար:

— Գիտեմ: Ուրիշ միջոց չը կար:

— Հիմակ ինձի խենդ է չը պիտի ըսէք:

— Ձէ՛, կրնաք խենդ ըլլալ. բայց տեսնելու եմ. ձեր ըսածն եւ ձեր ըրածը շատ բանաւոր կ'երեւի ինձ. բայց յիմարաց հետ բաւական գործ ըրած ըլլալով, անանկ երեւոյթներէ չ'եմ խաբուիր: Հասարակութիւնը չը կրնար երեւակայել թէ խենդերը ո՞ր աստիճան խորամանկ են. ճշմարտագէտ հրաշալի հաստատամտութիւն մը ցոյց կուտան ամենախելացի կերպով պատասխանելու համար իրենց ուղղեալ հարցումներուն: Ես դեռ չը պատահեցայ ա՛յնպիսի խենդի մը՝ որ ինքզինքը իբրեւ յիմար ցուցնելու գաղափարն ունենայ, հետազօտութիւններն ի դերեւ հանելու համար:

— Թո՛ղ այդպէս ըլլայ: Բայց եթէ մարդիկ համոզուելու ըլլան թէ ես ողջամիտ մէկն եմ:

— Տեսնենք: Ամէն ուղղով խենդ չ'ըլլար:

Եւ ա՛յն օրէն սկսեալ բժիշկը ձեռք առաւ ա՛յնպիսի միջոց մը, որով ընդհանրապէս լաւագոյն արդիւնքներ կ'ստացուին:

Պ. տ'Արվիլ պաղ ջրով լուացուելու ենթարկուեցաւ: Պ. տ'Արվիլ բանտին մէջ անցուցած երկար շաբաթներու միջոցին ջրոյ հետ նուազ եւ անկատար յարաբերութիւններ ունեցած էր. հետեւապէս ուրախութեամբ սկսաւ այն մեծ լուացումները՝ ուսկից զրկուած էր երկար ատենէ ի վեր: Ո՛չ թէ միայն պաղ ջրով լուացուելէ չ'էր խորշեր, այլ եւ հաճոյք կ'զգար զայն երկարաձգելով: Այս դրութիւնս քանի մ'օր շարու-

նակուեցաւ և Պ. տ'Արվիլ շնորհակալութիւն կը յայտնէր այս մասին: Օր մը որ լուացումը մոռցուեր էր,

— Ո՛ր է լուացումս, ըսաւ:

Գացին շուտ մը իմաց տուին բժշկին որ յիմարին մէկը պաղ ջրով լուացուել կ'ուզէր:

— Այդ մարդը խենդ չ'է, ըսաւ բժիշկը:

Յետոյ գնաց դտաւ Պ. տ'Արվիլը եւ ջանաց տրամաբանել անոր հետ. սակայն խօսակցութիւնն իսկոյն նուաղեցաւ. վասն զի երբ յիմար մը կ'ուզէ ստացուցանել թէ ինքն ողջամիտ է, պարտաւ բան է անոր հակառակախօսիլ. եւ երբ մէկը ինքզինքին համար ես խենդ եմ կ'ըսէ, անոր պատասխանել չ'ըլլար: Վերջապէս բժշկին համաբերութիւնը հատաւ և ձգեց գնաց ըսելով.

— Պա՛րոն, քա՛նի մը օրէն կը տեսնուինք:

Արդարեւ քանի մը օր վերջը, Պ. տ'Արվիլ կոչուեցաւ անօրէնին սենեակը, եւ նա իրեն յանձնելով իւր 87 Փր. 50 սանթիմը, մէկը զրաւ հետը՝ որ մինչեւ յիմարանոցին դուռը տանելով ազատ թողու պիտիք: Հետեւաբար Պ. տ'Արվիլ ազատ էր այնուհետեւ: Բայց ի՞նչ պիտի ընէր իւր ազատութեամբ:

Պայծառ էր երկինք. քաղցրաշունչ հով մը փչելով ծաղկեալ պարտիզաց մէջէն կուգար բարեխառնելու ամառուան հեշտարար օրուան մը տաքութիւնը: Այնպէս կը թրւէր թէ բնութեան մէջ ամէն բան հանգըստեան եւ բարօրութեան մէջ էր: Պ. տ'Արվիլ զգալով գեղեցիկ օդին առթած բարեկեցութեան տպաւորութիւնը, ըսաւ ինքնիրեն թէ դեռ մտածելու ժամանակ ունէր: Իւր գրպանին մէջ ունենալով 87 Փրանք 50 սանդիմ, իւր ընելիք լաւագոյն բանն էր Փարիզ դառնալ եւ երթալ նախաձաշ մ'ընել: Ճշդիւ դռնէն բիչ մը հեռուն կառք մը կեցած էր:

— Կա՛ռավար, ազա՛տ ես:

Այս միջոցիս կառքին դռնակը բացուեցաւ, եւ կին մը իջաւ վար ցատկելով.

— Սո՛սթէն, աղաղակեց կինը Պ. տ'Արվիլի վիզը փաթթուելով:

Իւր կիներն էր այս: Մտոց ոգ քանի կառքին մէջ՝ որն որ բռնեց Փարիզու ճանրան, կինը իրեն ըսաւ.

— Կը ներեմք քեզի : Այս ըրածդ շատ դէշ բան էր . բայց ես չեմ մոռցած թէ մենք միացեալ ենք միմեանց մինչ ի մահ : Այր եւ կին պարտին ամէն պակասութիւն եւ անիրաւութիւն մոռնալ, քան թէ խանդարել տան մէջ տիրելիք ներդաշնակութիւնը : Հոգ մ'ըներ . քեզի յանդիմանելու չեմ . նորէն սկսինք ապրիլ միատեղ ա՛յնպէս, որպէս թէ այսպիսի բան մը պատահած չ'ըլլար : Դու ալ ինձ պիտի ներես իմ ունեցած պակասութեանցս, վասն զի հարկաւ պակասութիւն մ' ունէի որ ձգեցիր դացիր : Պիտի ջանամ ուղղել զինքս և բնաւ երբէք չը հակառակիլ քեզի : Եթէ բացարձակապէս կատարեալ կին մը չեմ, ա՛յդ ալ իմ պակասութիւնն չ'է . բայց պիտի ջանամ կատարեալ ըլլալու : Այս եղելութեանց մէջ փնտռում մը չը կայ . եւ ես ա՛յնպէս կարգադրած եմ ամէն բան, որ դու տուն վերադառնաս առանց մէկու մը բացատրութիւն տալու : Մնողըս քու բացակայութեանդ վերայ խօսելիք մը չ'ունին քեզի, իսկ մեր բարեկամները բնաւ տեղեկութիւն մը չ'ունին այս եղելութիւններէն : Ես միայն ինձ պահեցի ամէն տխրութիւն եւ ամէն անհանգիստութիւն : Վասն զի գիտցէք որ շատ անհանգիստ եղայ : Կը վախնայի որ թշուառութիւն մը չը պատահի քեզի, եւ ա՛յնչափ տխուր էի եւ վշտացեալ, որ չեմ գիտեր ի՛նչ պիտի ըլլայի եթէ այս դործս աւելի երկար ատեն տեւելու ըլլար : Օր մը Արթուր Բոմիէ անուն մէկն եկաւ, ըսաւ ինձ թէ յանրաւի հալածուելով քեզի հետ բանտարկուեր, թէ բարեբաղդաբար իւր անմեղութիւնը ճանչցուեր եւ թէ իւր ազատութենէն վերջը իւր առաջին դործն եղած էր լուր բերել ինձ քու վրայօքդ : Միայն երեք հազար Փրանք կ'ուզէր քու ո՛ւր ըլլալդ ինձ ըսելու համար : Երկու հազար Փրանք տուի . պարապ բան է ըսաւ . վերջապէս երկու հազար հինգ հարիւր Փրանքի իրաւախոհ եղանք : Ո՛հ, ո՛րչափ երջանիկ եմ նորէն տեսնելով զքեզ : Իսկ դո՛ւ :

— Ե՛ս ալ այնպէս, պատասխանեց Պ. տ'Արվիլ :

Բաղդին այս վերջին հարուածէն բոլորովին յաղթուեր էր . ա՛յլ եւս դիմադրելու զօրութիւն չէր մնացեր վրան : Ելաւ Պորտո քնաց եւ գլուխ խոնարհեցուց ճակատա-

գրին զօրութեան առջեւ : Իսկ իւր 87 Փրանք եւ 50 սանթիմը պարտաւորեցաւ աղքատաց տալու . ընկերութիւնն այնպիսի լաւ կերպով կազմուած էր որ իւր բոլոր բացակայութեան ժամանակ այս դրամէն բան մը չէր կրցած ծախսել :

Ասկից ժամանակ մը վերջը Արթուր Բոմիէի պատահեցաւ Փարիզ ճանապարհորդած միջոցին :

Այս սուտ բարեկամն կը ջանար խուսիլ : Պ. տ'Արվիլ դէմն եկաւ եւ ըսաւ .

— Զիս մատենելուդ համար նեղացած չեմ ձեզի . վասն զի եթէ ա՛յդպէս չ'ըլլար, ուրիշ կերպ պիտի ըլլար : Կը տեսնէ՞ք, սիւրելի պարոն, երբ մարդս երջանիկ կը ծնի, բան մը չը կրնար ընել . կարելի չ'է որ երջանիկ չ'ըլլայ :

Թարգմանեց

ԿԱՍԹՈՆ ՊԵՐՃԸՌԷ

ԳԱՐԻԻԵԼ ԳՐԱՍԵՐԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՆԵՌԱՑԵԱԼԸ

Սիրտըս նեղի դատարկութեամբ ծովուն պէս,

Զի հեռացաւ ինձմէ հինուց բարեկամ :
Նըստիլ բլուրից վեր առանձին ես կըրնամ,
Զօքերուն խաղ զիտել դաշտին յասպարէս,
Որ բազմակարգ տեսքով երթայ դայ, —
Այլ յանկամս իմ խորհուրդներուն ենթակայ :

Զով ըզգացմունք մ'ունիմ փափուկ հանգիստեան

Երբոր քալեմ ցողաթաթաւ խոտերում .
Երկիրն է լերի եւ հեշտութեամբ տարածում,

Թըւի բօշայ մի տողմ դըրաւ հոս վըրան,
Իր թըփերով որ անտերեւ ծաղկաբեր,
Ուրկից շըփոթ թըռչըտում են կաքաւներ :

Երբեմն առած վեր նայելու զիմ գըլուխ,
Եւ անսահման է տեսարան նոյնդունակ,
Հոս ամէն ինչ է լուռ, միայն հողմափակ,
Որ մոլեգնի ազատ գետնում իբրեւ ծուխ .

Հեռութիւնից դան զանազան ձայներ ցիր
Ջորոնք դըժուար է հասկընալ ուշագիր :

Եւ հորիզոն կարծես Ովկեան մ'է անկոխ ,
Ուր ըսպիտակ գոլորշիներ օդայած ,
Ի՞նչ ահագին աշխարհ ետին է ծածկած ,—
Որուն վըրայ երկինքն անցնում է փոփոխ ,
Որուն անէ միտքն ահաբեկ լայն գոշում ,—
Մարդկութիւնն է որ բնութեան մէջ հե-
ծեծում :

Հեռուն երթամ, դեռ չատ հեռուն ան-
դադար
Երբ անոր խոր սուզի վըսեմ էլ արեւ ,
Հըսիայական շուքեր իյնան դաշտաձեւ :
Ի՞նչ 'տի գըտնամ այնչափ լուսով և խաւար ,
Փառքն աղմըկիչ , խըղդուկ մոռնչներ, դէպք
եւ ջանք ,—
Ի զուր փընտռեմ պիտոր սիրան այն սիրա-
յանդ :

Ո՛վ բարեկամ, թէ քեզ սիրում էի շատ
կորցըրելով ահա զգացի գլխիկոր ,
Պէտք մ'էր հոգւոյս ներկայութիւնդ զօրա-
ւոր :

Ո՛ւր ես հիմայ . — քեզի համար չըրջապատ
Միտքս ստեղծում է ընդարձակ մի գաւառ ,
Ուր անվախճան ճամբայ կըտրէ երիվար :

Հոգնած է նա . չունչ դուրս տալիս եւ
ռընդունք ,
Կայծթափ ոտքեր , — այլ դեռ անհուն է
ճամբան .

Պէտք է յառաջ վազէ ամպի մը նըման ,
Անցնիլ մարդեր զըւարթ, ձորեր գեղատունկ ,
Երթալ հոսիլ փուճ տեղ մի լեռ լըռանիստ
Ուր զինք մըղեց Աստուած , — նոյն է բու-
հանգիստ :

Հէնց թողուցիր զիս միայնակ ցանկին ծայր ,
Մեղամաղձոտ էր քու ժըպիտ, ձեռքդ այրող .
Չեմ մեղադրեր . ծերութեան վերջն է ծընող ,
Գաւազանին վըրայ ծըռած ունիս հայր ,
Մօրդ ճանչնայ պիտոր հազիւ աչք տըկար .
Քեզ համբուրել և օրհնել իղձ է յուսասպառ :

Արդ, բարեկամ, մընաս բարով առ յաւէտ ,
Մէյ մ'ալ տեսնել քեզ չեմ յուսար աշխար-
հիս ,

Անչափ սիրոյ ցաւ մընաց լուկ սըրտերնիս .
Էլ չես դառնար մեր հովիտներ ծիծուան հետ,
Երբ ճամբորդին մընացողն հեշտ կը մոռնան ,
Ձինչ ալիքներ ծովուն վըրայ աննըշան :

Գնա՛, մըտերիմ, գընա՛, — ինչպէ՛ս ե-
ռանդուն :

Յոյսը վըստահ արաւ ամէն երտասարդ ,—
Թէկուզ նըստած դահաւորակ ոսկեղարդ ,
Կամ կօշիկով փոշոտ , — ճամբան միշտ է
նոյն .

Պիտի անցնիմ մի օր հողկից միջաբեկ ,
Բայց մէկ մէկու չը հանդիպի՛նք 'տի երբէք :
Վ. ՍԸՎԱՃԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

ԽՍԱՂԱՍՍՏՈՒԹԻՒՆՔ

ԿԱԼԱՖԱՅԻ ԵՒ ՍԻՐՄԵՆԻՈՅ ԲՆԱԿԶԱՑ

Բ .

Յօրո՞ր¹ դարունը կուգայ , Կուկուն² կու
կօնչէ³ .

Ոտքս փուշ պատեցաւ , սիրտս կու խոնչէ .
Կօնչէ , Կուկուն , կօնչէ . քու բօնը բօն չէ :
Կօնչէ , Կուկուն , կօնչէ բարձր ի լեռներէ ,
Էլթամ⁴ զարիբութիւն , վախեմ մեռնելէ :
Կուկուն էլ թառեցաւ ածուքին⁵ պատին ,
Աստուած հոգիս առնուր մայրիկիս դողին :
Ել արի , ել արի , ել քանի քանի
Սիրտս քամուեցաւ , քունս կու տանի :
Կուկուն ու մեղուն կօմակ⁶ կու կրեն ,
Մո՛մ կ'ընեն , կը գօլեն⁷ Ջաքարին հոգուն :
Ջաքար , բու կրակը շատ մաշդիկ⁸ գօլէր .
Ոչ էլ Աստուած կուտէր⁹ , ոչ մայր կու բե-
րէր :

Գ .

Ճերմակ ծոցին կարմիր խնձոր չարել է ,
Չը՛ թողին որ գլուխս առել փախել է ,
Չը թողին որ էլթէլէ¹⁰ մայիս ու մուլքիս ,
Այս ու վախ կօնչելով կու քաղուի հոգիս :
Հոգիս տուի՛ բուռ մի տեղը գնեցի ,
Անդուռ անէրդէք տուն մի գնեցի .

Սարերը կը բուսնին եղներուն արօտ,
Հայրս ու մայրս ինձնէ մնացին կարօտ:
Սրգունին ճիհէզը հինգ ձի բարձուցին,
Մակարն էրի¹¹ դուռը, դարտակ դարձուցին:

Գնա՛, Սրգուն, գնա՛, մէյիէլ ետ աչէ,
Երեսիդ զիւրիֆները քովէ քովէ քաշէ:
Լաչին կայծի¹² Գալաճուղին փոսերը,
Մըռէն¹³ ինկաւ Արեւ ժամու փոսերը,
Աղջիկները ետ լարին կու սոփերը¹⁴,
Մըռէն ինկաւ ու սարերը հովեց,
Էրի Սիմոնին խաղար վեր բովեց¹⁵,
Օսկայ¹⁶ էկին Ոսկեհատին կովերը,
Օնկանջնուց կախ ունին ոսկի օղերը,
Տուէք սլաշար ելլէ էշթայ քովերը:

Հաւաքեց

Գ. Վ. ՄՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

1. Յօբոր — երբ որ:
2. Կուկուն — կուկու թռչուն:
3. Կօնչէ — կանչէ: Բօնը — բան: Ամէն Ա ըն՝ Օ կը հնչուի:
4. Էշթօմ — երթամ:
5. Ածուք — փոքր պարտեղ:
6. Կօմակ — պարէն, ուտեստ: Փափկաճաշակ:
7. Գոլեն — վառեն:
8. Մաշդիկ, մաշդ — մարդիկ, մարդ: Այսպէս է Վարդանը՝ Վաշդան, վարդապետ՝ վաշդապետ եւն:
9. Ոչ Աստուած կուտէր — ոչ Աստուած կուտար:
10. Էշթէլէ — երթայի:
11. Էրի — եկաւ:
12. Լաչին կայծի — ածեւ, արածեւ: Լաչինը՝ թեւեւ նշանակէ հօտ կամ նախիր. չը կըցի ճշգրիտ համակ:
13. Մըռէլ — մռայլ, մութ, ստուեր:
14. Սոփեր — սփ, ոտք եւ սրունք: Լարել սոփեր, ոտքը վերցնել, արագել, շտապել տուն դառնալ:
15. Էրի, էկաւ, խաղար վեր բովեց — բովեց, հաւաք:
16. Օսկայ — ահաւասիկ:

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՎԱՅ ԱՆՈՆՑ ՈՐՔ ԱՄՈՒՍՆԱՅԱՆ ԶԵՆ

Զիգակոյի մէջ այս օրերս Ծիածան անուամբ նոր խաղ մը հնարած են զոր ի գործ կը դնեն հետեւեալ կերպով:

Ընտանեաց տէր տիկին մը հրաւէր կը խրկէ բոլոր իւր ծանօթ կամ ազգական օրիորդաց: Այն օրիորդք որ կ'ընդունին սոյն հրաւէր, պարտաւոր են իրենց հաճելի կտաւէ եւ գոյնէ գոգնոց մը կարել, գոգնոցի վարի մասը միայն առանց կարելու թողլով: Մի և նոյն տան տիկինը կը հրաւիրէ նաեւ իրեն ծանօթ երիտասարդներն եւ «քառատասարդները», մանաւանդ անոնք որ երբէք ամուսնանալու խորհուրդ չ'ունին: Հրաւիրեցող գալտեան երեկոյին երբ սքա մի առ մի կամ զոյգ զոյգ կուգան, հիւրընկալի տանը դուռը օրիորդ մը գիրենք գլխաւորեցով տուփ մը կը ներկայացնէ իրենց: Տուփի մէջ տպեալ թուանշաններ կան փոքրիկ տոմսակներու վրայ տպեալ. սոյն թվաւանշաններէ մին իւր ձեռք իսկ կ'առնէ հատ մը օրիորդներէ մին. իսկ երբ հրաւիրեալը այր մ'է յայնժամ ուրիշ տուփէ կ'առնէ իւր թուանշանի տոմսը եւ որուն համար կը վճարէ տօլար մը: Եթէ հրաւիրեալը յիսունի չափ են, 25 տոմսակ մէկ տուփին եւ 25 տոմսակ ալ միւս տուփին մէջ կայ ի հարկէ եւ թուանշանը ալ թիւ մէկէն սկսեցնելով մինչեւ քսան եւ հինգ ցոյց կուտան մէն մի տուփի մէջ: Աղջկանց եւ այրերու ստացած թուանշանները միշտ թագուն կը պահուին մինչեւ որ խաղն սկսի: Տան տիրոջ մէկ նշանի վրայ բոլոր օրիորդք սենեկի մը մէջ առանձնանալով իրենց ճաշակով կարած գոգնոցները կը հագնին եւ ստացած թուատոմսն ալ կուրծքերնուն վրայ կախած կը ներկայանան հիւրերու: ասոնք ալ իւրեանց տոմսակները հանելով առաջին անգամ կը տեսնեն թէ ո՛վ է իրենց ձեռն-ձեռն, այսինքն այն անձն որ համանման թիւ ունի կ'ըլլայ նորա ընկերը: Ասի լրանալէ վերջ այրեր կը հրաւիրուին նստիլ եւ աղջկունք հանելով իրենց գոգնոցները կուտան իրենց ընկերներուն որ գոգնոցի վարի մասի կարը կարեն ասեղ եւ դերձան եւս տալով իրենց: Ահա հոս կ'սկսի խաղին ամենէ զուարճալի մասը, որովհետեւ ասեղին ծակէն դերձան անցնելու դժուարութիւնը, ասեղ բռնելու վարժութիւնն եւ կարելու արուեստն այնչափ անձանօթ են մեզ որ ընդհանուր Ժողովուրդէն կ'արկարկուին խեղճ ամուրիք մինչդեռ աղջկունք այնչափ ճարպիկութեամբ եւ յաջողակութեամբ կը

կատարեն զանոնք. եւ այս կերպով շատ ամուրիք կ'երդնուն թէ այլ եւս պիտի ամուսնանան, գէթ աղջկանց մէջ ամօթահար չը միտլու համար:

Մ. ԹՕՓՀԱՆԵԼԵԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿ

30 Մայիս 1886

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թիի 21.	(Մասիս Թիւ 3814)
» 27.	» » 3820)
» 28.	» » 3820)
» 29.	» » 3821)
» 30.	» » 3823)

ԽՆԴԻՐ

Թիի 31.

Բլաթինէ անամէջ քնտի մը արտաքին շառաւիղն է 0 մ, 1 իսկ իւր թանձրութիւնն անծանօթ է: Գտնել սոյն թանձրութիւնը, պայմանաւ որ գունտը անդիկին մէջ հաւասարակշիռ մնայ: Սնդիկին և բլաթինի խտութիւնք են. 13,6 և 21,5.

Թիի 32

Առաձգական խէժի (քառւոր) խտութիւնն է 0,9. գտնել թէ ի՞նչ թանձրութիւն պէտք է տալ սոյն նիւթէ թերթի մը, 2 տառնորդամեթր տրամագիծ ունեցող օգապարիկ մը շինելու համար, պայմանաւ որ 0 աստիճանաւ եւ 0 մ, 76 ճնշումով օդոյ մէջ 2 կռամ զօրութեամբ բարձրանայ. Յայտնի է թէ այս պայմանաց մէջ ջրածինի խտութիւնն է 0,0693, օդոյնը համարելով 1. Նոյնպէս յայտնի է թէ 1 լիտր օդը կը կշռէ 1 կրմ, 3.

Թիւ 28 խնդրոյ մասին մեզ հասած լուծումներն սխալ ըլլալով, կ'սպասենք ուղիղ լուծումներ ստանալու:

ԳՂԻ. — ՏԵՔ. Արամ Ալէմեան և Յովհաննէս Սամէլեան. — Թիւ 26 խնդրոյ լուծումներդ ուղիղ է:

Պ. Կլատսդոնի հռչակական ինքնօրինութեան հռչակաւոր ծրագիրն երկրորդ ընթերցմամբ մերժուեցաւ Երեսօխմանաց Ժողովէն: Այս է օրուան կարեւորագոյն խնդիրն: Ազատական նախարարապետն իւր ծրագրին ի նպաստ ստացաւ միայն 511 քուէ եւ հակառակ՝ 541 քուէ, որով 30 ձայնից մեծամասնութեամբ մը մձուեցաւ Մերժումը: Սպասելով որ Լոնտոնի թերթերը բերեն մեզ մանրամասնութիւններ այդ պատմական նիստերուն վրայ, հեռագիրք չեն դադրիր օր աւուր տեղեկութիւններ հաղորդելէ: Այս քուէարկութենէ յետոյ, որ կատարուած է այս երեքշաբթի օր, Պ. Կլատսդոնի առաջարկութեամբ Երեսօխմանական Ժողովն դադրեցուց իւր նիստեր մինչեւ հինգշաբթի, որպէս զի Նախարարութիւնն որոշէ իւր բռնելիք ընթանքը: Երէկ, միջօրէին առնուած հեռագիր մը կը յայտնէր թէ Նախարարաց Խորհուրդն որոշեր է լուծել Երեսօխմանական Ժողովն: Եւ արդէն, ըստ անգլիական Սահմանադրութեան, երկու ճանքայ կար իւր առջեւ, կամ հրաժարիլ եւ կամ լուծել Խորհրդարանն: Առաջինն անելանելի ճանքայ մ'էր արդի պարագայից մէջ, ըստ որում հրաժարեալ Նախարարութեան յաջորդելու պիտի կոչուէր զայն դատապարտող մեծամասնութիւնն եւ այդ մեծամասնութիւնն բոլորովին ներհակ տարրերէ կը բաղկանայ: 250 պահպանողականաց հետ դաշնակցած են առժամապէս 50 ի չափ Ուիկներ կամ աղնուապետական ազատականներ և 50 ի չափ արմատականներ կամ ժողովրդական ազատականներ, եւ ասոնց ո՛չ մի մասը կրնայ ուրոյն նախարարութիւն մը կազմել: Ուստի եւ Երեսօխմանական Ժողովը պիտի լուծուի. այս կերպով Պ. Կլատսդոն կ'ուզէ դիմել բովանդակ Անգլիոյ Ժողովրդեան ազատ կամաց եւ քուէին. ընտրողը կ'ամ հաստատելով ինքնօրինու-

թեան սկզբունքն հրահանգ պիտի տան իւրեցնց ներկայացուցչաց՝ համաձայնիլ մանրամասնութեանց վրայ և կա՛մ յարիւլ այն պահպանողական — ազատական մեծամասնութեան որ ինքնօրինութեան սկզբունքն իսկ կը մերժէ : Բայց մինչեւ որ արտայայտուի այս ընդհանուր կարծիք , բաւական յուզեալ օրեր պիտի անցունէ Անգլիա , եւ արդէն հեռագիրք սկսան ծանուցանել թէ մեծ յուզում կը տիրէ Իռլանտայի հիւսիսարեւմտեան :

Ֆրանսայի մէջ եւս հանրային կարծիքն յոյժ զրգուռած է Իշխանաց արտաքսման խնդրովն : Խորհրդարանին կողմէ կարգեալ մետասանից Յանձնաժողովն երկար վարանումներէ ու դարձուածներէ յետոյ որոշեց որ Ֆրանսայի վրայ իշխած արքայական եւ կայսերական բոլոր գերդաստանաց չառաւիղք արտաքսուին Խորհրդարանի յատուկ օրէնքով մը որով խնդիրը չը պիտի թողուի կառավարութեան կամաց . Պ. տը Ֆրէսինէի նախարարութիւնն , թէեւ ո՛չ միաձայնութեամբ , հակառակ է այս ընդհանուր արտաքսման պահանջման եւ կ'ուզէ որ իւր կամաց թողուի դործադրութիւնն : Երեսփոխանաց Ժողովն այսօր կ'սկսի վիճաբանիլ ներկայացեալ ծրագրոյն վրայ որ բռնն յուզմանց առիթ պիտի տայ եւ պիտի վճռէ հոսկ ուրեմն Բարիքի կոմսին , Օմալի դուքսին , Նաքսոնին իշխանաց եւ անոնց գերդաստանաց բաղդը :

Քաղաքական ուրիշ խնդիրներ բաղդատարար երկրորդական դիրք մը գրաւած են այս խնդրոց առջեւ : Հելլենական խնդիրը կրնայ այլ եւս լուծուած նկատուիլ : Մեծ տէրութիւնք տեսնելով որ Պ. Դրիքուրիս իրապէս կը ցրուէ բանակն , վերուցին Յունաստանի եզերաց պաշարումն որ հետեւանք էր Պ. Տէլեանիսի յիմար քաղաքականութեան և ա՛յնքան վնասաբեր եղաւ երկրին : Տէրութեանց դեսպանք եւս սկսած են հետզհետէ Աթէնք վերադառնալ , որով այլ եւս բնաւ երկիւղալի երեւոյթ մը չ'ընծայեր խնդիրն եւ քիչ օրէն խնդիրն իսկ գոյութիւն ունենալէ պիտի դադրի , եթէ քաղաքական անակնկալ միջադէպեր չը գան տակն ու վրայ ընել ամեն բան :

* *

Ազգային Սահմանադրութեան տարեդարձը կատարուեցաւ անցեալ կիւրախէ օր ի ներկայութեան շուրջ տասն հազար հոգւոյ բազմութեան մը : Մասնաւոր յիշատակութեան արժանի են Նիկոմիդիոյ եւ Ռոտտոյոյի ազգայինք որք յատուկ շոգենաւներով փութացած էին ի Կ. Պոլիս , նուիրական սլարտականութիւն մը համարելով , ամեն տարուան նման , ներկայ գտնուիլ այս համակրելի հանդիսին եւ այս առթիւ նուէրներ մատուցանել Ս. Փրկչի Հիւանդանոցին : Ամեն . Ս. Պատրիարք Հայրն եւ Խրիմեան Հայրիկ նախագահեցին սեղանին զոր պատած էին ազգային պաշտօնական մարմնոց ներկայացուցիչք , Երեսփոխանք , Հոգաբարձութեան անդամք եւ մայրաքաղաքիս ամեն թաղերէն եկող պատուաւոր ազգայնոց բազմութիւն մը : Սեղանի կէսին Ս. Պատրիարք Հայրն ոտքի ելնելով բաժակ առաջարկեց վասն կենաց Վեհ . Սուլթանին եւ Ամեն . Խրիմեան Հայրիկ՝ վասն Վեհ . Մալար Կաթողիկոսին եւ եկեղեցական բարեկարգութեան : Ապա հետզհետէ բաժակներ առաջարկուեցան վասն կենաց Ամեն . Ս. Պատրիարքին , վասն Սահմանադրութեան , ի յիշատակ Պէգճեան Ամիրայի և վասն կարգադիր Մասնախմբին : Վերջին բաժակն առաջարկեց դարձեալ Ս. Նախագահն՝ վասն բարօրութեան եւ երջանկութեան Հայ Ազգին : Բոլոր այս բաժակներ ընդունուեցան եռանդագին կեցցէներով :

Միջօրէէն յետոյ , Հիւանդանոցի ընդարձակ եւ հովասուն պարտիզին մէջ , ուր պատրաստուած էր հանդիսավայրն , սկսան ատենաբանութիւնք որք թէեւ սակաւթիւ սակայն արտասանուելով ազգային պաշտօնական մարմնոց ներկայացուցչաց կողմէ , արտասովոր կարեւորութիւն մ'ունեցան այս տարի : Առաջին խօսքն առաւ Քաղաքական Ժողովոյ ատենապետ Վսեմ . Նուրեան էֆէնտի որ բացատրեց Սահմանադրութեան օգուտներն առ Ազգն , յայտարարելով թէ փոքրիկ , գրեթէ աննշան մի քանի փոփոխութիւններ բաւական են որպէս զի Սահմանադրութիւնը լինի մի գործի որ համապատասխանէ ազգային պիտոյից : Մէրէէմ գուլի Յարութիւն էֆէնտի խօսեցաւ Սահմանադրութեան անցեալին ու ներկային վրայ : Ի վերջոյ ատենաբանեց Ազգային Ժո-

ղովոյ Բ. Ատենապետ Յ. Թորոսեան էֆէն-
տի, ի վեր առնելով գլխաւորաբար սա կէ-
տը, թէ ժամանակին հետ քանի որ Ազգը
կը վայելէ Սահմանադրութեան օգուտներն,
այնքան աւելի կը տկարանայ միւս կողմէ
այն խանդն ու ոգեւորութիւնն որ կը նըշ-
մարուէր Սահմանադրութեան հաստատու-
թեան առաջին տարիներուն մէջ, մայիս
24ի տօնին օրը: Թորոսեան էֆէնտի պըն-
դէնք որ ուրիշ տարիներ աւելի փայլով եւ
աւելի կենդանութեամբ տօնուի այս ազ-
գային տարեդարձ: Հանդէսը փակեց Խրիմ-
եան Հայրիկ պերճատենաբանութեամբ մը:

Կարեւոր լուր մը չունինք շաբթուս մէջ
հաղորդելու, բայց եթէ մէկ քանի տարա-
ժամ մահեր որք հանրային վշտաց արտա-
յայտութիւններ յառաջ բերին: Ալթուն
Տիւրքի Առաքել էֆէնտի՝ նախագահն Մի-
ացեալ ընկերութեան՝ որ ծանօթ ու ու-
րելի էր ամենուն ո՛չ միայն այդ պաշտօնով
զոր կը վարէր տարիներէ ի վեր, այլ եւ
ազգին գրեթէ ամեն հանրային ձեռնար-
կութեանց մէջ իւր ունեցած մասնակցու-
թեամբ, իւր ազնիւ բնաւորութեամբ եւ
աւետարական գործունէութեամբ, մեռու
քանի մ'օր առաջ:

Մահը տարաւ նաեւ հայազգի երիտա-
սարգ փաստաբան մը՝ Վիչէն Սէրվիչէն էֆ-
որդի Վսեմ. Սէրվիչէն էֆէնտի, մեծա-
նուն բժշկին եւ ազգային բազմադիւն
գործչին, որ իւր պերճախօսական տաղանդով
կարեւոր տեղ մը կը գրաւէր մայրաքաղաքիս
փաստաբանաց դասուն մէջ:

Ազգայնոց և օտարազգեաց խուռն բազ-
մութիւն մը համախմբուած էր այս երկու
դաճաղներուն շուրջ, նուիրելով պսակներ
ի նշան սիրոյ եւ համակրանաց եւ զգայուն
ատենաբանութեանց մէջ արտայայտելով
խորին վշտակցութիւն ի կորուստ բարեկամաց
զորս ծածկեց դերեգմանին հողը:

Տ. Ա.

ԱՐԵՒ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԻՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներէն թերեւս խիստ քի-
չեր գիտեն թէ անցեալ տարւոյ սկիզբէն ի
վեր ջանքեր կ'ըլլային գործակցական ընկե-

րութեանց դրութեամբ Պոլսոյ մէջ ընկերու-
թիւն մը կազմելու, նստաւակ ունենալով
գլխաւորաբար՝ իրեն մասնակցողները շա-
բաթական փոքր վճարումներով մէկ մէկ
բնակարանի տէր ընել եւ:

Գործակցական ընկերութեանց վրայ՝ որք
քաղաքակրթեալ ազգաց մէջ օր ըստ օրէ
ընդհանրանալու վրայ են, լրագրոյս մէջ դա-
նազան առթիւ գրուած ատեն թէ եւ ան-
ուղղակի կերպիւ ակնարկութիւններ եղած
են եւս յիշեալ ընկերութեան նկատմամբ,
բայց նոյն միջոցին դեռ կատարուած իրո-
ղութիւն մը չ'ըլլալով, եւ խնդիրն միայն
ծրագրէ մը բաղկանալուն, յարմար չ'էինք
դատած երկարօրէն գրել անոր վրայ. բայց
այժմ որ ծրագիրը գործադրուելու վիճակին
հասած է այլ եւս, պարտք կը համարինք մեր
ընթերցողաց մասնաւոր ուշադրութեանը
յանձնարարել յիշեալ ձեռնարկութիւնն որ՝
ինչպէս կը յուսանք, եթէ հաստատամու-
թեամբ եւ գիտակցութեամբ գործոյն շա-
րունակուելու ըլլայ՝ կրնայ ամենակարեւոր
ծառայութիւն մը մատուցանել մեր երկրին
եւ ժողովրդեան. ուստի յետ այսօրիկ անոր
վրայ՝ իբրեւ ժողովրդային գործ, ո՛չ միայն
տեղեկութիւններ անպակաս պիտի ընենք
մեր թերթին մէջ, այլ մեր կողմանէ ալ ժա-
մանակ ժամանակ տնտեսագիտական յօդ-
ուածներ եւ լուրեր հրատարակելով պիտի
փութանք ժողովուրդը պատրաստել ի տըն-
տեսութիւն, որ հիմն է ամեն ազգի նիւ-
թական եւ իրական յառաջդիմութեան:

Այսօր ընկերութեան առաջին կազմա-
կերպութեանը վրայ միայն մէկ քանի տող
գրելով, յաջորդ թիւերով մեր ընթերցողաց
պիտի հաղորդենք հետզհետէ պէտք եղած
լուրերն:

Այս տարուան մարտ 9 թուականաւ
տեղի ունեցած ժողովոյ մը մէջ Միութիւնը
կազմելու փափաք ունեցող իննսուն և հինգ
անձանց ներկայութեամբ եւ նոցա կրկնա-
պատիկ թուով ընկերաց կամակցութեամբ,
հաստատուեցաւ Արեւելեան Տնտեսական
Միութիւնը, ձեռնարկութեան հեղինակին
կողմանէ անցեալ տարւոյ 31 յունուար թը-
ւականաւ հրատարակուած յայտագրի մը
եւ մասնաւոր Յանձնաժողովոյ մը կողմանէ
պատրաստուած կանոնադրի մը համաձայն,
որ տպուած է այս տարուան մարտ 9 թը-

ւականու : Յիւեալ կանոնագրի տրամադրութեան համեմատ Միութիւնն ունի նախ , Ընդհանուր ժողով մը , որ է ընկերաց ընդհանրութեան ներկայացուցիչ . երկրորդ , Խնամակալ ժողով մը , որ է օրէնսդիր եւ հսկող իշխանութիւն . երրորդ , Տնօրէն ժողով մը որ է կարգադիր իշխանութիւն Միութեան գործոյ . չորրորդ , Օգնական Խորհուրդներ ըստ հարկին եւ ըստ գործոյն . և հինգերորդ , Գործադիր Լաւանթիւն կամ վճարեալ պաշտօնեայիներ : Ըստ այսմ , բաժանորդաց յիւեալ առաջին ժողովոյ մէջ , ընտրուեցան Ընդհանուր ժողովոյ անդամներն 30 անձինք , որք յետոյ մարտ 25 ին ի ժողով գումարելով ընտրեցին Խնամակալաց եւ Տնօրէն ժողովոց անդամներն , որոց անուններն կը տեսնուին հետեւեալ ցանկերուն մէջ .

ԱՆԳԱՄՔ ԽՆԱՄԱԿԱԼԱՅ ԺՈՂՈՎՈՅ

Աւետիս էֆէնտի Յ. Եօրտամեան , Արեւապետ Միրտիչ » Աճէմեան , Փոխադասակարգ Բեթրաք » Էսմէրեան
Գրիգոր » Գարակէօղեան , Գանձապահ Եօհան » Գ. Հիրցըլ Մէնթեան
Կարապետ » Թիրեաքեան
Համազասպ » Պալարեան
Միքայէլ » Կիւլապեան
Յակոբ » Արշակ (որ իբրեւ հեղինակ ձեռնարկութեան անդամ է ըստ օրինի առանց ընտրութեան) :

ԱՆԳԱՄՔ ՏՆՕՐԵՆ ԺՈՂՈՎՈՅ

Տիգրան էֆէնտի Տ. Ներսէսեան , Արեւապետ Աթհանաս » Ծաննիտէս , Փոխադասակարգ Գարեգին » Պաղտատեան
Կարապետ » Չէչեան
Յակոբ » Պօշնաքեան
Նշան » Փափաղեան
Բերովբէ » Կիւմիւշեան

Ընդհանուր ժողովոյ անդամոց մէջէն 15 անձինք միւս ժողովներուն անդամ ընտրուած լինելով մնացած 17 անձանց անուններն են .

Անդրանիկ էֆէնտի Շիւմանեան
Գէորգ » Զարդարեան
Եաղուպ » Նշաստաճեան
Եղիա » Տէմիրճիպաշեան
Եղիազար » Հաճեան
Երուանդ » Մերեճմզուրի

Միհրան էֆէնտի Կարապետեան
Միհրան » Ճապիեան
Միհրան » Սարբեան
Յովհաննէս » Ազնաուր
Յովհաննէս » Շնորհքեան
Յովհաննէս » Ունճեան
Պարգեւ » Փափաղեան
Սարգիս » Արապեան
Սեպուհ » Թիւրապեան
Ստեփան » Պ. Փափաղեան
Տիմիթրիոս » Զօլաքիտէս

Ընդհանուր ժողովոյ պակասած անդամոց թիւը լրացնելու համար , ընդհանուր բաժանորդաց նոր հրաւէր պիտի ըլլայ յառաջիկայ ընդհանուր ժողովոյ գումարումէն առաջ . այս վերջինը որ տեղի պիտի ունենայ 3-4 ամսէն , պիտի վաւերացնէ հողային եւ շինութեան օրէնքներն եւ Միութեան ելմտացոյցը , զորս Տնօրէն ժողովը որոշած է պատրաստել վեց ամսուան վտրձառութենէ մը յետոյ : Նոյն միջոցին մէջ վարչական ծախքերն կարելի եղածին չափ թեթեւցնելու համար վճարեալ պաշտօնէից հաստատութեան գործադրութիւնն առ այժմ յետաձգած է , մեծ զոհողութեամբ վարչութեան գործերն ինքն ստանձնելով եւ իւր մէջէն երեք պատուակալ պաշտօնեայիներ կարգած է իբրեւ անդամ վարչութեան , որք են .

Մեծ . Տիգրան էֆէնտի Տէր-Ներսէսեան իբրեւ ընդհ. Տնօրէն .
Մեծ . Յակոբ էֆէնտի Պօշնաքեան , իբրեւ ընդհ. Քարտուղար .
Մեծ . Կարապետ էֆէնտի Չէչեան , իբրեւ Գանձապետ :

Այս անձինք պիտի վարեն Միութեան գործերն Տնօրէն ժողովոյ գործակցութեամբ , Խնամակալաց ժողովոյ հսկողութեան ներքեւ . իսկ ընդհ. գանձապահութեան պաշտօնը կը շարունակէ վարել Մեծ . Գրիգոր էֆէնտի Գարակէօղեան :

Արտօնատէր Կ. Ս. Իիթիիճեմն
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԻՐԱԳՐՈՅ